




ԿԻՉՈՐՈՒԹՅՈՒՆ

Քաղաքային «Կումայրի» թերթի հավելված,

1991 թ. փետրվար, № 13: Գինը՝ 50 կոպ.



Քաղաքային հանձնաժողովի նիստը՝ Ն. Ի. Թիմկովի գլխավորությամբ:

Ով ինչով կարող է

ԴԵՊՐԵՍՍԻԱ «ԶՎԱՐՔՆՈՑ» ՕԳԱՆԱՎԱԿԱՑԱՆԻՑ

Դժբախտություն է եկել մեր տուն, և մեր բազմամյա շապուհն է կիսել մեր վիշտը: Այս օրերին հանրապետությանն օգնության են գալիս տարբեր երկրների բարի կամքի տեր մարդիկ: «Զվարթնոց» օգնավակայանում ամեն րոպե վայրէջք են կատարում աշխարհի բոլոր ծայրերից ժամանող ինժեքիներ՝ «ԲԼ»-եր, «ՏՈՒ»-եր, «Բոինգներ», «Զերկույսներ» և այլն:

Օգնավակայանում օրն է րօն հերթապահում են շապուհն օգնության, բեռնատար ավտոմեքենաներ, երեանի և շրջակա շենքերի հազարավոր բնակիչներ:

Չի հասցնում Զրահախից ժամանած «Բոինգը» մարելի շարժիչները, երբ նա մոտ են շապուհն բեռնատարներ, ավտոմեքենաներ, բեռնարավանք մասնակցող մարդիկ:

— Երբ լսեցիք հայ ժողովրդին հասած դժբախտության մասին, — ասում է Զրահախի հատուկ մասնագիտացված խմբի ղեկավար Մարտին Պատրիզը, — անմիջապես պատասխանակամություն հայտնեցիք զալ աղետի վայր: Գեր մեկ վայրկյան իսկ չենք մոռանում, որ փյուտակների տակ դեռ ողջ մարդիկ կան և որ նրանց մենք կարող ենք փրկել: Այստեղ ենք ժամանել անհրաժեշտ հանդերձանով, մրբե՛րով: Մեզ հետ բերել ենք նաև այնպիսի սարկավորումներ, որոնք փյուտակների տակ կարող են նրշտ որոշել մարդկանց տեղը: Իսկ

(Ծարունակությունը՝ 6-րդ էջում)

198 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 7



Քաղաքի կենտրոնական հրապարակում ամեն ինչ շնչում էր աղիտով:

Լուսանկարը՝ Վ. ԿՈՏՈՎԻ

ԳԵԿՏԵՄԲԵՐՅԱՆ ԱՐԶԱՎԻՐՔԸ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐՈՒՄ



ՕՂՆՈՒՔՅՈՒՆ...



ԶՈՒՐ ՀԱՍՏՐԵՐ...



Գորկիից եկած փրկարեները «տեղավորվել կեն» Բաղախային մարզադաշտում:

Լուսանկարները՝ Վ. ԿՈՏՈՎԻ

Քո կյանքն էլ
անցավ հեքիաթի
ն մ ա ն

Հեքիար ջե,
Նդիկ
Հունիսյան մի օր,
Սիրուց կողքով է անդրո,
Արևն է տվել նուր,
Նրբանկությունից պարթել է
Սիրուք արշավուն
Ու ծնվել եմ ես:



Այսպես վառ ու ինքնատիպ միայն Հայկանի Տոնոյանը կարող էր գրել: Բանաստեղծական շնորհ ունեն, քնարական բնավորություն ու սիրող ջերմ սիրտ: Սիրում էր երեխաներին: Համոզված ամեն մի երեխայի ճամար ունեն մի լավ խոսք, բարի ծախս: Կարողանում էր հմայել, մշտապես իրեն գրավել երեխաներին՝ մեռ կյանքի ծաղիկներին:

Մի գեղեցիկ ծաղիկ էլ ՀԱՅԿԱՆՈՒԾ ԱՍԵՓԱՆԻ ՏՈՆՈՅԱՆԸ էր, որ արյակն էլ՝ կոկոնները դեռ լիովին չբացած, կյանքը լիարուստ չճաշակած հեռացավ կյանքից, թողնելով բանաստեղծական չափարտուն մի խոսք, և թեպետ փոքր, իր արահետը բացած: Առաջիկայում լույս կտեսնի Հայկանի Տոնոյանի բանաստեղծական հետմահու գողտրիկ ժողովածուն:

Ծնվել է 1960 թվականի հունիսի 28-ին, Լեհիմսկանում: 1977 թվականին ավարտելով Մ. Նալբանդյանի անվան միջնակարգ դպրոցը, աշխատում էր մանկական պատկերասրահում: Սերտորեն կապված էր Հայաստանի գրողների միության բաժանմունքի հետ: 1985 թվականից սկսած տպագրվում էր «Գարուն» ամսագրում, «Ավանգարդ», «Բանվոր» թերթերում: Ղարաբաղյան շարժման ջաղաքային կոմիտեի անդամ էր: 1988 թվականի մայիսից մեքենագրուհի էր աշխատում քաղաքային թերթում, որը և կնքեց մահկանացուն շարադես երկրաշարժի ժամանակ...

ԱՐԱՄ ԵՎ ԱԼԻ ԾԽԱՋԱՆՆԵՐ



ՊԱՏՄՈՒՄ ԵՆ ԿԻՆԸ, ՄԱՅՐԸ



ՍՈՒՔԻԱՅԱՅԱՆՆԵՐ



Արամ (Արամյան) Ալեոյի քի Օրիջյանը աշխատում էր գույպեղենի ա/մ կոտորման արտադրամասում 40 տարուց ավելի: Բոլորն էին ճանաչում վարպետ Արամին, նա այնպես էր կապված գործարանի հետ, որ թոշակի գնալուց հետո էլ չէր ազատվում աշխատանքից, գործարանում էլ մնաց: Ա. Օրիջյանը վարպետ-դաստիարակ էր, հարյուրից ավելի նորարարական առաջարկություններ ուներ, որոնցով մեծ օգուտ էր տվել հիմնարկին: Դրա համար նրան շնորհվել էր վաստակավոր նորարարի կոչում: Պարգևատրված էր Լենինի շքանշանով, մի շարք պատվոգրերով, հանրապետական կարգի թոշակառու էր: Դստն էր եղել նրա կյանքը: 1987 թ. բանտարկել էին նորը և, որպես հակաեղափոխականի ընտանիքի, ճնշել էին երեխաներին: Ուսումը ավարտել էր աշխատանքի հետ միասին: Բարի էր, հասնում էր բոլորին: Այդ օրը, երբ սկսվել էր երկրա-

շարժը, ցանկացել էր գործարանից դուրս գալ, բայց հետո նստել էր իր սեղանի մոտ, որտեղից և 10 օր անց գտան նրան: Չիմացավ, որ իր անդրանիկ որդին՝ Ալիկը ևս գոհվեց... Ալիկ (Ալեքսան) Օրիջյանը ծնվել էր 1947 թ., Լենինականում: Ավարտել էր պոլիտեխնիկական ինստիտուտի Լենինականի մասնաճյուղի մեխանիզացիայի ֆակուլտետը: Ամուսնացած էր, ուներ կին, 2 երեխաներ: 1987 թվականից աշխատում էր Լենքաղխոր հեղրի շինվերանորոգման օղբեստի 3-րդ շինվարչությունում, սկզբում որպես ինժեներ, հետո պլանբաժնի վարիչ: ապա նույն շինվարչության պետ: Հարգում, սիրում էին նրան բոլորը: Բարի էր, զիջում էր բոլորին, ոչ ոքի վատ բան չէր կամենում և չէր անում: Լավ ամուսին էր, լավ հայր և լավ որդի: Չունի լույս 11 օր հետո հարազատները հագիվ գտան նրան, ճանաչեցին հագուստից...

1988 թվականի դեկտեմբերի 7... Ամեղ արհավիրք, որից առ լուծի բաժինն հասավ ինձ. զոհ վեցին իմ ընտանիքի բոլոր անդամները՝ 2 տղաներս ու ամուսինս: Այս դաժան հաշվեհարդարի, մեր ժողովրդին հասած անդուր տատապանքների համար ուզում եմ մեղավորները պատժվեն օրենքի օղջ խստությամբ: Ուզում եմ ինչ-որ մեկը պատժվի, ինչ-որ մեկը պատժվի շինարարներից, որոնց մեղքով զոհ գնացին հազարավոր հանճարներ, այդ թվում իմ անգին որդիները՝ Արսենը և Եղիշեն:

ԱՐԱՐԱՏ ԵՂԻՑԻ ՍՈՒՔԻԱՅԱՆ

Ծնվել է 1926 թվականի դեկտեմբերի 23-ին: Աշխատում էր Ախուրյանի հակաժանտահառային կայանում որպես համաձայնակարգի օգնական: Կիրթ ու զարգացած, իր ընտանիքին, սիրասուն զավակներին նվիրված անձնավորություն էր: Գրում էր բանաստեղծություններ, ուներ ընթերց սիրտ և հայրենասեր բնույթ: Անգամ բանաստեղծություններ էր նվիրել իր զույգ

կանթեղներին՝ Արսենիկին ու Եղիշենին: Ինչ իմանար, որ զավակների հետ միասին միևնույն օրը պիտի կնքեր մահկանացուն և հուշ դառնար:

ԱՐՄԵՆ ԱՐԱՐԱՏԻ ՍՈՒՔԻԱՅԱՆ

Տղաս՝ Արսեն Սուքիայանը ծնվել է 1972 թ. դեկտեմբերի 15-ին: Սովորում էր Հակոբ Հակոբյանի անվան դպրոցի 10-րդ դասարանում: Ծառ լավ էր սովորում, գրում բանաստեղծություններ, թարգմանություններ էր կատարում Լեռնոստվից ու Եսենինից, երգում էր դառնալք քաղաքական գործիչ: Անըջում էր այն օրվան, երբ այնպես վեհորեն կծածանվեք Հայաստանի եռագույն դրոշմը: Նրա ցանկությունը էր Հայաստանը տեսնել անկախ:

Ինչպիսի երազանք ասես, որ չունեք իրոք հանճարեղ այս պատանին: «Կուռնկ» շարքերի ձեռագիր 7 համարներ էր հրատարակել, գրել «Ամարասի վանքի տերը» 3 գլխից կազմված ստեղծագոր-

ծություն: Հայաստանի ինքնիշխանության մասին 83 կետով դիրքորոշում էր մշակել: Դասընկերները և ուսուցիչները հիշողություններ են գրել Արսենի մասին, բանաստեղծություններ նվիրել: Դրանք կարդացվել են «Վերջին գանգ» հանդեսին, որ վերածվել է յուրատեսակ հուշ-երկերի:

ԵՂԻՑԻ ԱՐԱՐԱՏԻ ՍՈՒՔԻԱՅԱՆ

Ծնվել է 1974 թ. սեպտեմբերի 6-ին: Եզակի խելքի և հազվագյուտ դատողությամբ տեր տղն էր: Աշխարհագրությանը սիրապետում էր գերազանց: Ծանկացածը երկիրը, պետությունը կարող էր նկարել, տեղադրելով այդ երկրի, պետության խոշոր քաղաքները: Գիտեր աշխարհի բոլոր երկրների 1, 2 և 3 միլիոնանոց և այլ քաղաքների անունները: Դեռ 5 տարեկան հասակում մտովի կազմում էր ամբողջ տարվա օրացույցը: Եթե հարցնեիք, թե ի՞նչ օր է, ասենք 1979 թ. ապրիլի 23-ը, նա մի փոքր մտածելուց հետո կասեր անխալ...



ԿԱՐՄ ԵՎ ՍԵՐԳԵՅԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Փայտաղեն ու բարեհամբույր այս երիտասարդ կինը սիրված ու հարգված էր կոլեկտիվի՝ բանբանեղենի ա/մ մեքենամաշվային կայանի կողմից: Ուներ հանգիստ բնակություն և լավատես էր կյանքի նկատմամբ: Սովորել էր № 9 միջնակարգ դպրոցում, ավարտել էր նաև հաշվապահական դպրոցը: Ընդամենը 28 զարուց էր ապրել Կարմեն, երբ պայթեց այդ շարաննգ երկրաշարժը: Եվ ինչպես շատերը, այնպես էլ Կարմենը շատ երազանքներ թողեց կիսատ: Երևույթարժի օրը նա տանք էր, իր վեց ամսական աղջնակի հետ: Կարմենը մահացավ՝ թողնելով երկու մանկահասակ որբեր:

ՍԵՐԳՈ ԿԱՐՄԵՆԻ ՆԱԶԱՏՐԾԱՆ

Ծնվել էր Լենինականում, 1957 թ. Յուլիսի 22-ին, բանվորի ընտանիքում: 1964 թ. վականին հաճախել է № 27 միջն. դպրոց և ավարտել 1972 թ., ապա ընդունվել № 14 պրոֆտեխնումմարսը և ավարտել 1975-ին: Աշխատել է վագոնային դեպոյում որպես կառուցավար, վազելել կոլեկտիվի հարգանքն ու վստահությունը: Այնուհետև տեղափոխվել է բանբանեղենի ա/մ մանվածքային ֆաբրիկա, աշխատել ենթավարպետ: Սերգոն կազմեց օրինակելի ընտանիք: Կնոջ հետ միասին, ծնողների օգնությամբ դաստիարակում էին իրենց երկու դուստրերին, որոնք այդ չարաբառտիկ օրը որբացան:

ԱՆՈՒՇԻԿ ՅԵԼԻՔՍԻ ՆԱԶԱՏՐԾԱՆ

1970 թվականին է ծնվել: Բարձր գնահատականներով է ավարտել № 34 միջնակարգ դպրոցը: Միաժամանակ հասցրել է ուսանել նաև № 6 երաժշտական դպրոցում: 1987 թ. վականին ընդունվել է Միքայել Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետը, որը և դարձավ նրա գերեզմանը: Այս տարվա փետրվարի 23-ին լրանում է Անուշիկ Նալբանդյանի ծննդյան 20 տարին, բայց նա կյանքին հրաժեշտ տվեց 18-ը նոր միայն բոլորած, ողբերգական հանգամանքներում: Չկա հարազատների և ընկերների կողմից այնքան սիրված և այնքան կյանքով ստեղծում աղջիկը:

ԵՐԿՈՒՍԸ ԳՈՒԼՊԱՅԱԳՈՐԾՆԵՐԻ ԿՈՆԵԿՏԻՎԻՑ

ՌՈՒԶԱՆՆԱ ՄԵՍՐՈՊԻ ՄԱՐԳՈՅԱՆ

Ծնվել է 1960 թվականի հոկտեմբերի 2-ին, Լենինական քաղաքում: Սովորել է № 35 դպրոցում, այնուհետև ուսումը շարունակել № 47 պրոֆտեխնումմարանի դերձակ-ձևարարների խմբում: Աշխատում էր գույպեղենի արտադրական միավորման կոտորման արտադրամասում: Լավ բանվորուհի էր, վազելում էր գործընկերների սերն ու համակրանքը: 1988 թվականի դեկտեմբերի 7-ին գնաց աշխատանքի և այնու չվերադարձավ, մահկանացուն կնքելով արտադրությունում:

ԼԻԼԻԿ ՄԱՐՏԻՆԻ ՔՈՉԱՐԾԱՆ

Ծնվել է 1936 թվականին: Լիլիկ Քոչարյանն էլ գույպեղենի արտադրական միավորման բազմաթիվ զոհերի թվում է: Տարիներ շարունակ Քոչարյանը աշխատել է գույպապարծների կոլեկտիվում, աշխատել մեծ նվիրումով: Ծառտերի նման ներդրում ունեցել ձեռնարկության հզորացման գործում: Լիլիկը ընտանիքի հոգատար մայր էր, սիրելի կին: Աշխատանքային օրվա ավարտից հետո ընտանեկան օջախում էր նա գտնում հոգեկան հանգիստն ու անցորդը:

ԶՈՐԱՆՆԵՐԻ ՄԻ ԲՆՏԱՆԻՔԻՑ

Կյանքում այնքան էլ շատ չենք հանդիպում այնպիսի մերթաշնուկ ամուսնական զույգերի, ինչպես նրանք էին: Բարի էին, աշխատասեր, նվիրված միմյանց ու հարազատներին, շրջապատի մարդկանց: Ծնվել էին միմյանց երջանկացնելու, շրջապատին իրենցով լցնելու, գորգորելու ու մեծացնելու իրենց երեխաներին: Բայց, ավաղ, ճակատագիրը դաժան գտնվեց նրանց նկատմամբ:

ՀՐԱԶ ԳԵՎՈՐԳԻ ՄՆՈՒԹԱՐՑԱՆ. ծնվել է 1941 թ.: 15 տարեկանից ծնողների հետ կիսել է բազմամուկ ընտանիքի հոգսը: Աշխատանքային կենսագրության մեծ մասը կապված է գույպեղենի արտադրական միավորման հետ: Առանց աշխատանքի հիվանդ էր Հրաչը: Հաճախ, երբ հարկ էր գրագրվում, աշխատում էր երկհերթ: Տանեցիկները կատակով ասում էին. «Առանց բեզ աշխատանքի կկանգնի ձեռնարկությունում»:

Նոր բնակարան էին ստացել: Կարգի էին գցում, դժվարությամբ ձեռք բերելով շինանյութը, մեծ ճիգերով բարձրացնում 8-րդ հարկ: Նոր էին ամեն ինչ ավարտել, նոր միացնում արտի համադրատ ապրեին: Զնայողի՞ն՝ նույնիսկ մի անգամ վերնաշրջանի իրենց բնակարանը բարձրանալ: Օնցքի փրկառուկների տակ մնացին Հրաչը, աղջիկը՝ Գալանեն և փոքրիկ Խաչիկը:

ԳԱՆՍԱ ԳԵՎԱՄԻ ՄՆՈՒԹԱՐՑԱՆ. Ծնվել է 1947 թ.: Ավարտել է թեթև արդյունաբերության տեխնիկումն ու աշխատանքի անցել սկզբում կարի, ապա գույպեղենի ֆաբրիկայում: Երկրաշարժի ժամանակ գույպեղենի ֆաբրիկայում էր, ուր տարածքը մաքրելուց հետո նրան դիակը չգտնվեց: Եթե աշխատանքային ընկերակցից որևէ մեկը տեղեկություն կուներ, խնդրում ենք հաղտնել «Վումայրի» թերթի խմբագրություն կամ № 4 լուսանկարչատուն:

ԳԱՏԱՆԵ ՀՐԱԶԻ ՅԱՅԼՈՅԱՆ: Ծնվել է 1965 թ.: Սովորել է Դուկասյանի անվան № 16 դպրոցում, հետո՝ Կարա-Մուրզայի անվան երաժշտական ուսումնարանում: Այս հմայիչ կենսախիղ ու բարի հայունին երջանիկ էր իր նորաստեղծ ընտանիքով: Իր փոքրիկ տղայով: Սպասում էր երկրորդ երեխային: Բայց նրանց նկատմամբ էլ դաժան գրտնալվեց ճակատագիրը:

ԽԱԶՆԻԿ ՎՈՒՈՒՅԱՑԻ ՅԱՅԼՈՅԱՆ. Ծնվել է 1987 թ.: Ի՞նչ գրել այս փոքրիկի մասին: Ընտանիքի ուրախությունը էր, տատիկի ու պապիկի գորգորանքի ատարկան: Հասակակիցներից մարմնեղ էր, խելացի, ծախտերես: Գալան ու մայրը փառաբանել էին փոքրիկին, որ իրենց կյանքով փրկվեց նրան, բայց անօգուտ: Երեքով գոհվեցին:



ՌՈՒՋԱՆՆԱ ԷԴՈՒԱՐԴԻ ՄԿՐՏՅԱՆ (ԲԱՐՈՒՅԱՆ)

Ծնվել է 1958 թ. Լեհիստանի քաղաքում: Երազում էր իրավաբան դառնալ, բայց դարձավ մանկավարժ և մայր: Մայր երկու երեխաների, առանց որոնց չէր պատկերացնում կյանքը, օրը, ժամը:

Բայց... Դեկտեմբերի 7-ին, առավոտյան երեխաներին մանկապարտեզ բերեց և... չտարավ: Երանկյունի թաղամասում, 12-հարկանի շենքերից մեկում բնակարան էր ստացել և ուրախությամբ չափ չկար: Երեխաների համար կնունք արեց նոյեմբերի վերջին շաբաթը և ամեն անգամ ասում էր. «Տունս օրհնվեց, էլ վախեցնալու բան չունեն» ու չցիտեր, որ մեկ շաբաթ հետո այդ նույն սուրբ փվվելու էր իր գլխին:

17 օր հայրը, եղբայրները, անուսիցը և նրա հորեղբայրը փնտրում ու չէին գտնում նրան դիակը... Եվ գտան համազրատ նստած ատտիճանների վրա, առանց քերծվածքների և կապտուկների:

ՊԱՏՄԱՌԻՄ ԵՆ ՄԱՅՐՆ ՈՒ ՏԱՏԸ



Թող զարմանալի ու տարօրինակ չիվա, թող արտաու՛տ լիվա, որ ես... նախանձում եմ բոլոր ներքանց, ու՛րբեր գերեզմանատներ են այցելում՝ դիտենալով, որ հուշաքարերի տակ ամփոփված են թանկ ու սիրելի անչուններ, որոնք, գուցե լսում են մեր կանչերը, կարծես մտովի արձագանքում... Իսկ ես ամեն անգամ գերեզմանատուն եմ գնում՝ անզոր կանչերով լցնելով շրջապատը, զրույց վարելով սառն ու անհաղորդ քարերի հետ, որովհետև դրանց տակ գտնվող գերեզմանափոսերը դատարկ են, որովհետև ազդիկս՝ ԼԱՐԻՍԱ ՎԱԶԳԵՆԻ ՍԱՐԳՍՅԱՆն ու ու՛րբան

չա թոռնիկս՝ ԳԵՎՈՐԳ ՍԱՄՎԵԼԻ ՍԱՐԳՍՅԱՆն այդպես էլ մնացին չգտնված, իմ հիշողության մեջ դրոշմվեցին այնպես, ինչպես ես նրանց տեսել էի վերջին անգամ. ժպտալիս, ուրախանալիս... Հիմա իմ ծղիտն ու ուրախությունն էլ են անդառն ու անհայտ կորել, իմ մխիթարությունն է կորել, բանզի անարդար է կորցնել ու՛րբ տարեկան բալիկի, որն ինքը կյանքն էր, ժպտացող ուրախությունն էր... Մարդու լեզու է կարկամում թշնամուն անգամ նույնը կամենալիս, էլ ու՛ր մնաց թե ինքն ապրի այդ տառապանքի մեջ... Լարիսան իմ մեկը չէր, բայց փոքր դուստրս էր, որի

հետ բոլորից շատ էի կապված: Ավարտել էր երաժշտական ուսումնարանը, դասավանդում էր Ե Տիգրանյանի անվան երաժշտական դպրոցում, սակայն ամենամեծ սերը թատրոնն էր, որի կոնցերտմեյստրն էր: Մայր ու որդի անափ խնդուխտ էին լցվում, երբ հայրը՝ Մուսկյանի անվան թատրոնի գերասան Մամվել Սարգսյանն էլույթ էր ունենում: Նրա հետ կիտում էին անհանգստությունը, նրա հետ ասես վաստակում ծափերի պարզեցած հպարտությունը: Հիմա ես մենակ եմ թատրոն գալիս ու մենակ գնում տուն՝ ոչ մի կերպ չհարողանալով լցնել դատարկությունը, չհարողանալով համակերպվել այն մտքին, որ Լարիսան ու Գեորգիկն ինձ հետ չեն, որ նրանք չկան, որ այլևս չեն լինելու...

Ես ամեն օր կարծես լսում եմ նրանց ոտնաձայնները, կարծես լսում եմ թոռնիկիս կանչերը: Նայում եմ թոռնիկիս ընկերներին, կարծես նրանց հայացքների մեջ կարդում եմ ինձ տանջող հարցը. «Ո՞ր է Գեորգիկը»:

Իսկապես՝ ո՛ր է, ո՛ր է նրա ժպտը, ո՛ր է ընտելան արդարությունը:

ՔՆԱՐԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԵՆԱԿՅԱՆՆԵՐԸ



ԿԱՐԱՊԵՏ ՎԱՂԱՐՇԱԿԻ ՄԵՆԱԿՅԱՆԸ. Ծնվել է 1946-ին, Կոմայրիում, սովորել Լա կոբյանի անվան դպրոցում և Կարա-Մուրզայի անվան երաժշտական ուսումնարանում:

Դեռ մանկուց Կարապետը սիրել է երգն ու երաժշտությունը: 7 տարեկանից նվագել է դուդուկ: Մասնակցում էր Սեյանի անվան մշակույթի պալատի գեղարվեստական ինքնագործունեության խմբակների աշխատանքներին: Մենակատար էր, հմայում էր իր փայլուն նվագով: Արժանացել է մի շարք դիպլոմների ու պատվոգրերի: Բազում անգամ է մարդկանց ուրախացրել ու հուզել իր բաղջրահնչուն նվագով:

Ապրում էր երաժշտությանը, գեռ շատ ծրագրեր ու



անելիքներ ուներ, երբ կյանքի ծաղկուն հասակում դարձավ հաշ, կնոջ՝ ԱՆՈՒՇ ԶԱՅԿԻ ՄԵՆԱԿՅԱՆԸ հետ միասին:

Որդին՝ Մկրտիչը, շարունակում է հոր կիսատ թողած գործը, այս տարի ընդունվելով երաժշտական ուսումնարանի դուդուկի բաժինը: Երաժշտության, երգի սիրահար է նաև Մկրտիչի քույրը՝ Մարիամը:

Կարապետի կինը՝ ԱՆՈՒՇ ԶԱՅԿԻ ՄԵՆԱԿՅԱՆԸ ծնվել է Կոմայրիում, 1955 թվականին: Ուսանել է Արտյոմ Պետրոսյանի անվան դպրոցում, երկամուսնուհի տեխնիկումում: Համերաշխ ու երջանիկ ընտանիք էին երկու զավակներով և սիրող ամուսնով:



ԱՄԲՐՈՋ ԿՅԱՆՔՈՒՄ
ՋՐԿՎՈՐԱՎԱՆ

Պետական անվտանգության կոմիտեի գնդապետ ԱՄԲՐՈՋ ԿՅԱՆՔՈՒՄ Ա. ԼԵՐՄԱՆԿՐՅԱՆԸ ծնվել է 1922 թ., Կոմարիում: Դպրոցը ավարտելուց հետո Ալեքսանդրյանը պատերազմի առաջին օրվանից մարտնչել է ֆաշիստ գիշարազորի դեմ մինչև նրա հաղթական ավարտը, մասնակցել Ռուսաստանի, Ուկրաինայի, Բելոռուսիայի ազատագրմանը, համդիսացել հարամուխի, Իզյումի, Ջուրջուխի և այլ քաղաքների աստվածոր բաղաբացին:

Հայրենական պատերազմի ավարտից հետո Ալեքսանդրյանը ուսանել է Երևանի պետական անասնաբուժական-անասնաբուժական ինստիտուտում, ապա աշխատանքի անցել Ամասիայի շրջանում որպես անասնաբույժ: Բայց նա կոչված էր այլ գործի: Կարճ ժամանակ անց ուսանեց Կիևի ՊԱԿ-ի դպրոցում: Աշխատել է Ամասիայի և Աշտարակի շրջանների ՊԱԿ-երում, բազմիցս ընտրվել տեղական խորհուրդների ղեկավար: Պատերազմում և աշխատանքում ունեցած ծառայությունների ճանար պարգևատրվել է շքանշաններով և մեդալներով:

Կենսաբանական անցնելուց հետո, 1988 թվականից աշխատում էր հոկոդ հաստոցների գործարանի հաստեղ բաժնում:



ՀԱՍՎԱԾ ԽՈՍՏԵՐ

ԱՐԹՈՐ ՍԵՐՅՈՒԱՅԻ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Ծնվել է 1966 թ. հունվարի 30-ին: Սովորել է ավարտել Լեհինականի № 28 միջն. դպրոցը: Բանակից վերադառնալով ընդունվում է Կամոյի գյուղատնտեսական տեխնիկում, իսկ 1988 թ. մարտից աշխատում էր Լաճուրի ֆաբրիկայում:

Այն անավոր վայրկյաններից ի՞նչ է եմ մտածել... Մտածեցի, որ էլ չեմ տեսնի իմ երկու անմեղ բալիկներին և ծերության դուռը թակող ծնողներին, որոնց միակ փափայլած գափակն էր: Միգչդեռ այնքան երջանիկ էի համարում ինձ... Հարագատ, տար օջախ, սիրս սուն բալիկներ, իսկ մտքումս յոթը որդով սեղան նստելն էր: 7 քաջ հայրդի դաստիարակելը: Սիրում էի երաժշտությունը, տարված էի գրականությամբ: Կարդում և նվագում էի ուրախ թե տխուր պահերին, և այն հույսը փափայլում, որ որդիս՝ Արտուշիկը, անպաղվան երաժիշտ կդառնա:

Ամեն ինչ կիսատ թողած հեռացա, սիրելի ծնողներ, պահեք և փայփայեք որբացած իմ բալիկներին, մի՛ տխրեք, ես ձեզ հետ եմ՝ ձեր մտքում, ձեր հոգու մեջ: Լաց մի՛ լինիր իմ անուշ մայրիկ, ես սիրում եմ ծիծաղ ու երջանկություն:



ՊԱՏՄՈՒՄ Է ԸՆԿԵՐՈՒՄԻՆ

ԱՆՆԱ ՄԻՔԱՏԵԼԻ
ԴԱՎԹՅԱՆ (ԿԱՐԱՊԵՏՅԱՆ)

Ծնվել է 1960 թ. օգոստոսի 2-ին, սովորել է № 21 միջն. դպրոցում, զոհվել է Լեհինականի կոշիկի ֆաբրիկայում:

Իմ լավ Ալինա, վերադարձել եմ հայրենի քաղաք, վերադարձել եմ տխուր ու ավերված հողով: Նայում եմ քո նկարին ու սիրոս մղկտում է ցավից, քանի որ չկաս այլևս ու թեզանից մնացել է ինձ լույսանկարդ: Լուսանկարդ նը վիթեցիր այն ժամանակ, երբ ես կարիք ունեի բարի մարդու, դու եղար վերջինը, իմ լավ Ալինա...

Ինչպես նայեմ քո գավակների՝ Արտակի ու Արայիկի աչքերին, ինչպե՞ս հարցնեմ, արտասանեմ «ինչպես եք» բառը, երբ գիտեմ, թե քո քաջակալությամբ ինչպես կարող եմ լինել երեխաները: Այնքան մտերիմ, ազնվամտ սիրելի էիր ինձ համար, մինչդեռ չկարողացա վերջին պահին անգամ տեսնել քեզ, իսկ այսօր ուզում եմ գոռով բարձրաձայն, հայտնել քո լուրին, ողջ աշխարհին, որ կար, ապրում էր Ալինա անունով մի ճրաշք աղջիկ, որը արհավիրքին զոհ դարձավ 29 գարուն տեսած:

Մարդիկ, չմոռանաք իմ լավ Ալինային...

ՄԱՐԻԵՏԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ



ՍՈՒՍԱՆՆԱ ԳԵՎՈՐԳԻ
ԳՈՄՑՅԱՆ

Բ. Ղարիբջանյանի անվան դպրոցի 10-րդ դասարանցի այս աղջիկը ծնվել է 1972 թվականի մայիսի 1-ին: Դպրոցական կյանքի մայրամուտն էր մոտենում, պատանեկան թեթև ողբեր ճանքներին հրաժեշտ տալու օրերը: Հրաժեշտ՝ դպրոցին, իրենց իմաստուց խրատներով կյանք ճանապարհող սիրելի ուսուցիչներին ու ընկերներին:

Ընդամենը մի քանի ամիս ու... Ավարտական քննություններից հետո, ինչպես բոլոր շրջանավարտները, Սուսաննան էլ կրքայլեր ի՛ր ճանապարհով: Իսկ այդ ճանապարհը որոշված էր արդեն՝ դեպի բժշկական ինստիտուտ: Բայց... Նա քայլեց ոչ մեկի կողմից չսպասված, մութ ու խավար այն միակ ճանապարհով, որտեղից այլևս վեքադարձ չկա: 28 ասցրեց հրաժեշտ տալ ո՛չ դպրոցին, ո՛չ ուսուցիչներին ու ընկերներին, ո՛չ հարազատներին: Ցավոք, հրաժեշտ տվեց միայն աշխարհում ամենաթանկ բանին՝ կրակին ու... հեռացավ լուռ, անձայն:



ԳՈՒՀԱՐ ՄԻՇԱՅԻ
ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

3 տարեկան Արմանը և 2 տարեկան Արթուրն այդ դաժան օրը կորցրին իրենց սիրելի մորը:

Գոհարը ծնվել էր 1964 թ. հուլիսի 14-ին: Սիրում էր ծաղիկներ, մարդկանց, հատկապես՝ երեխաների: Համբերատար էր, լսող, խելացի և ցանկանում էր, որ այդ բոլորը փոխանցվեն իր բալիկներին:

Նձ 12 միջն. դպրոցն ավարտելուց հետո Գոհարը 1981 թ. ընդունվեց պոլիտեխնիկական ինստիտուտի կարի բաժինը՝ շարունակելով ծնողների ընտրած մասնագիտությունը: Ուսանողական տարիներին ամուսնացավ, ստեղծեց մի գեղեցիկ և անուր ընտանիք: Ինստիտուտը ավարտելուց հետո աշխատում էր կարի օ/մ-ում որպես ինժեներ, վաղելուց էր հարազատների և աշխատանքային ընկերների սերն ու հարգանքը: Այդ դաժան օրը Գոհարը գտնվում էր աշխատանքի վայրում: Նա հեռացավ կյանքից, երբ նոր 24 տարեկան էր:

Ժամանակն անցնում է, երբ խաները մեծանում են, իսկ ինքը իր փոքրիկ բալիկներին նայում է պատին փակցված նրկարից: Երեխաներն էլ նայում են իրենց մայրիկի նկարին՝ աչքերում կարոտ ու թախիծ:

Հ ա թ ու թ յ ու Ն յ ա ն ն ե թ



ՄԱՐՏՈՒՆԻԿ ԸՆԵՐԻԿԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ ծնվել է 1964 թ. մարտի 17-ին: Մեծացել է հորաքրոջ ինամքի տակ: Ավարտել է Միքայիլ Նալբանդյանի անվան միջնակարգ դպրոցը:

Բանակային ծառայության կանխվելով, Մարտունիկը ծանայել է Բրատսկայային (Զինոստրովսկի), աշխատանքի անցել տրիկոտաժի արտադրական միավորումում: Ունեցել է մի երեխա, անվանակոչել Անի, բայց կարողը սիրտը զնաց, թողնելով որը իր Անիին:



Անիի ծննդից հետո փոխեց մասնագիտությունը, ծեփագործ բանվոր էր աշխատում: Զոհվեց աշխատավայրում՝ հակածանտախտային



կայանի զիմացի զնուս շահագործման շանձեված շենքում: Մարտունիկը սիրում էր երաժշտությունը: Նվագում էր ադորգեոն: Հոգատար էր, լուսկյաց, համբերատար, մեծերին հարգող և հավասարակշիռ անձնավորություն: Կինը՝ Վարդուհին, դաշնակահար էր: Նրանց

հաճախ էին միասին նվագում:

ՍԱԹԻԿ ՍԱՇԵԿԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ ծնվել է 1970 թվականի օգոստոսի 30-ին: Միքայիլ Նալբանդյանի անվան դպրոցի շրջանավարտներից է: Դպրոցն ավարտելուց հետո ամուսնացավ: 10 ամիս էր, ինչ հարսնացի էր, մահկանացուն կրեքից ծննդատանը, իր նորածին Աննայի հետ:

Հոր ամենասիրած դուստրը չի գտնում իր տեղը: Հիմա մի փոքր մխիթարվում է աղջկա գերեզմանով: Լավ սովորող երեխա էր, օգնում էր մորը խնամելու իր փոքր եղբորը: Ավարտեց հաշվապահական տեխնիկումը: Ինչ տեմբերի 5-ին նրա և սկեսրանց տանը ուրախության օր էր: Սակայն երկու օր հետո վրա հասավ անկանխատեսելի և ամեն ինչ տակնուվրա արեց:

ԿԱՅԱ ՆԻԿՈՒՅՑԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ ծնվել է 1961 թ. օգոստոսի 5-ին, Մոլդովայի մայրաքաղաք Քիշնևում: 10 տարի առաջ էր եկել Ուկրաինայից: 2 երեխա ունենալուց հետո ուզում էր անպայման աշխատել:

Ավարտել է Մոլդովայի Քիշնևի առևտրի ինստիտուտը: 1986 թվականից աշխատում էր «Մանկական աշխարհ» հանրախանութի ըսպորտային իրերի բաժնում: Այդ օրը նա երեխայի հիվանդաթիվան պատճառով հիվանդաթիվան էր վերցրել: Աշխատավայրից գանգեցին, խեղդեցին գալ օգնելու, ապրանք էին ստացել: Ամուսնու օգնությամբ շտապեց աշխատատեղ, և այդտեղ էլ ազատի զոհ դարձավ:

ԱՂԵՏԸ ՈՉ ՈՔԻ ԶԻՆԱՅԵՑ



ՍԱՀՐԱԿՅԱՆ ՆԻԿՈՂԱՅ ՍԵՐԳԵՅԻ

զոհվեց կնոջ, աղջկա, թոռան հետ:

ՍԱՀՐԱԿՅԱՆ ՄԱԹԻԿ

Գլխով շատ բան էր անցել. եղեռն, գաղթ, Արևմտյան Հայաստանի Բիթլիս քաղաքից էր և բույն էր հյուսել կենսականում: Այն խառնում էր Տերյանի անվան դպրոցում, մանկավարժ էր իր էությունով, հարգված էր կուլեկտիվում, սիրված՝ աշակերտների կողմից: Բազմիցս արժանացել է պարգևների, մեդալների: Վաստակավոր ու սուղչուհին հրաժեշտ տվեց կյանքին 75 տարեկան հասակում:

ՍԱՀՐԱԿՅԱՆ ՌՈՒԶԱՆԱ

Քաղաքում շատերն էին նրան ճանաչում: Աշխատել է ինժեների դպրոցում, պոլիտեխնիկական ինստիտուտում, դասավանդել է անգլերեն: Պատրաստվում էր թիկնածուական դիսերտացիայի պաշտպանությունը:

Ավագ, հիմա կենսախինդ այդ աղջիկը միայն հիշողությունն է: Հուշերիս մեջ նա մնացել է որպես մեղմ, քարհամարույր, միևնույն ժամանակ սկզբունքային ու պահանջկոտ կին, որին կծգտեին նմանվել ճանաչողներից շատերը:

ՍԱՀՐԱԿՅԱՆ ՄԱՅԱ ՎԻԼԼԵՐԻ

Պատին Մայայի նկարն է. իսկ շուրջը «հավաքվել» են նրա խաղալիքները, որ ինչքան ժամանակ է տեք ու գորգորոզ ձեռքեր չունեն:

Չկա Մայան՝ փոքրիկ, նուրբ, հեղ աղջնակը: Սովորում էր երկրորդ դպրոցում, առաջին դասարանում էր, որոշել էր նմանվել հորաքրոջը՝ Ռուզաննային... Երկուսն էլ հիմա չկան... Հանգստություն ձեռք, անմեղ զոհեր:

ՕՐԳԻՆՅԱԼՆԵՐ



ԳՈՒՐԳԵՆ ՕՐԳԻՆՅԱԼԸ

Մեր քաղաքում ճանաչված էր «Կլանանտիստ Պարիզ» անունով: Նա որսախ հավաքների առանցքն էր, սիրված ու հարգված երաժիշտ: Նոր էր ստացել բնակարան Խասակյան փողոցի № 13 շենքում: Կնոջ՝ Անիշկայի հետ, 3 աղջնակներին դպրոց ճանապարհույց հետո, նոր հարկի տակ հաճախ էին հյուսում գեղեցիկ ապագայի պայծառ երազները, մտովի պատկերացնում իրենց դստրիկներին ընտանիքի մայրեր...

Հարաբաստիկ այդ օրը, ավագ, գարձավ երիտասարդ

ամուսինների երազանքների ու կյանքի վերջակետը: Երգի ու երաժշտության նկատմամբ ունեցած սերը թերևս պատճառ դարձավ ԱՆԻՉԿԱՅԻՆ (ծնված 1952 թվականին) ամուսնանալու Գուրգենի հետ: Կենսախինդ բնավորության տեր երիտասարդ կինը հիմա էլ հարազատների ու դորժնկերների՝ գուպայի ֆարթիկայի կոտտոն արտադրամասի բանվորուհիների հիշողության մեջ հառնում է իր զրնգուն երգով ու առվի կարկաչ հիշեցնող վարակիչ ծիծաղով:

ԱՆԱՀԻՏԸ (ծնված 1976 թվականին) Գուրգեն Օրգին յանի Կուլյա եղբոր աղջիկն էր. № 16 դպրոցում սովորող ուշիմ ու խելացի աշակերտուհի: Առաջին դասարանից սկսած նա ամեն օր տանը դպրոց-դպրոց էր խաղում՝ անթերի կրկնօրինակելով սիրելի մանկավարժներին: Գպրոցն ու ուսումը նրա տարբեր էին, բայց այդ օրն աղջնակն ուշացել էր դասից ու չէր ուզում դպրոց գնալ: Անուամենայնիվ, նա արցունքոտ աչքերով բռնեց դպրոցի ճամփան և այլևս չվերադարձավ:

Ով ինչով կարող է

(Սկիզբը՝ 1-ին էջում)

մեր շները վաճակված են մարդկանց փնտրելու և փառակներից դուրս բերելու համար: Ասեմ նաև, որ բոլորս կարող ենք նաև տուժածներին օգնություն ցույց տալ. անհրաժեշտության դեպքում հրշեջների պարտականություններ կատարել: Մեր կամավորական խմբում 166 մարդ կա: Բոլորս էլ նման արտակարգ իրավիճակներում գործելու մեծ փորձ ունենք:

Յրանսիացիների խումբը նաև պարհավում է կենսական, Սպիտակ:

Հանդուստով վայելչ է կատարում ԳՅՀ-ից ժամանած ինժեները: Բացվում են ղոններ և Քյոլնի Կարմիր խաչի ներկայացուցիչ Քյաուս Միրեմայերը ինժե է սկսում օգնել բնակարանային աշխատանքներին, բայց տեսնելով, որ բնակարանային շատ-շատ են, մի ֆիչ հանգստացած մի կողմ է փառվում:

Կարմիր խաչի մեր կազմակերպությունը հայաստանցի գործընկերներին է ուղարկել 65 տանեա դեղորայք, սրսկման պարագաներ, այլ անհրաժեշտ սարքավորումներ, — ասում է նա: — Քիչ հետո Արտֆուտի ինժեներներով Երևան կգաման 22 որակյալ ֆրիչներ, որոնք մասնակցել են աշխարհի տարբեր ծայրերում կատարված փրկարար աշխատանքներին: Ի դեպ, նրանք եղել են նաև Արևմտյան Հայաստանում՝ էրզրումում:

Անընդհատ ու անընդհատ վայելչ են կատարում և երկրն սլանում ինժեներներ: Մի կողմի վրա պատրաստակամ սպասում են մայրաքաղաքում ուսանող արտասահմանցի ուսանողները:

Երևանում ուսանող 47 հնդկներս էլ պատրաստ ենք և արյուն տալ, և մեր ամեն տեսակի օգնությունը առաջարկել եղբայրական հայ ժողովրդին, — ասում է Աշիդ Ռիսարգավան, — այս հիմնվուրց հողի վրա մեզ գգում ենք ինչպես մեր տանը, իսկ այսօր դժբախտություն է... միասին պիտի դիմանանք:

«Չվարքանց»-ում վայելչ են կատարում աշխարհի բոլոր ծայրերից ժամանած ինժեներներ, և սփյուռնահայ ուսանողներից շատերը կամավոր ստանձնել են քաղաքային կառուցման աշխատանքները: Երբ մենք անցյալին չիմանալու հետևանքով անօգնական փորձում էինք բացատրվել ամերիկյան ինժեներին անձնակազմի հետ, մեզ մոտեցան ամերիկահայ երկու ուսանողուհիներ՝ Տ. Գևորգյանն ու Գ. Մանվանյանը:

— Մեզ իբեց հետ կենսական շտաբան, — ասացին երբևէ, — մենք էլ եկանք այստեղ՝ գեթ մի բանով օգտակար լինելու համար...

Ինժեներները շարունակում էին վայելչներ կատարել:

ՑԱՎԸ ՍԵՂՄԵՆԻ ՄԵՐ

ԿՈԿՈՐԴԻՆԵՐՈՒՄ ԵՎ...

Ա Պ Ր Ե Ն Ք

Ի՞նչ անել, տեղի տալ ցավի առջև, թույլ տալ, որ ահեղ ողբերգությունը բարացնի սիրտը ու հոգի՞ դի շնորհ: Գրանով կարող են մեկին օգնալ բերել, օգտակար լինել մի տեղ, մեղմիկ աղետի սարսափները ապրած որե՞ մեկի վիշտը... Չէ, սիրելի բարեկամ, եթե թո ժողովրդի հարազատ զավակն ես, ուրեմն ուժ պիտի գտնես թո մեջ կրելու նրան բաժին ընկած խաչը: Նորությունն է մեզ համար սղավ ու դառնությունը: Պատմությունը ե՞րբ է շոյել մեր գլուխը, բայց չէ որ մենք միշտ բարձր ենք պահել մեր գլուխը: Հարմանալի է, եթե հավատանք մեր պատմության տարեգրիներին, մեզ բաժին ընկած հասարակական ողբերգություններին հաճախ են ուղեկցել բնական աղետները: Մենք այսպես ենք թրծվել, այսպես ենք հասել քսաներորդ դարին, կորուստների ու ողբերգությունների առումով ամենատեսականին...

Մենք, այո, մի պահ կարկամեցինք ցավի առջև, քարացանք ճակատագրի դաժանագույն հարվածից: Մեր արյուն մեջ ու հոգիներում պետք է արթնանա ապրելու, հարատևելու, լուսավոր երազի համար մարտնչելու ոգին: Սերունդներով է հարատևում ժողովուրդը: Աղետի քոթը նոր էր բնկել, և համալսարանի ուսանողները՝ տղա թե աղջիկ, արդեն ոտքի վրա էին. պատրաստ՝ մեկնելու աղետի վայրերը: Եվ համալսարանի՞ ուսանողները միայն: Նման ողբերգություններ կինոկարներում ու գրքերում տեսած երիտասարդ այս մարդիկ ինչ արիություններ են տանում իրենց խաչը: Որտե՞ղ են սովորել... Ինչ հպարտությամբ են պատմում եղբայրական վրաստանի օգնության մասին: Չէ, միայնակ չենք եղբայրական ձեռք են մեկնում Միություն մյուս ժողովուրդները, բաղաբարիք աշխարհի ձայնն է լսելի դառնում:

Եկեք, ուրեմն, սեղմենք ցավը մեր կոկորդներում, հավատարիմ մնանք զժամանակները ապրելու մեր ճակատագրին՝ ապրենք, ի հեռուկս մեր դաժան ճակատագրի և ոչ միայն ճակատագրի...

ԳԱՌՆԻԿ ԱՆԱՆՅԱՆ

Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի դեկան

ԿԱՐԱՊԵՏՅԱՆՆԵՐ



ՍԻՐԱՆՈՒԾ (ԱՍՅԱ) ԿԱՐԱՊԵՏՅԱՆ (ՎԱՐՊԱՆՅԱՆՆԸ) ծնվել է 1942 թ. հունվարի 8-ին, Լեւոնակաճում: Դա-գորու Աղայանի անվան դրպրոցում ստացել է միջնակարգ կրթություն և աշխատանքի է անցել գույպագործների կո-լեկտիվում: Սիրանուշը հոգատար մայր էր երկու զավակների համար, սիրող կին, սիրված ու հարգված անձնավորություն հարա-



զատների, բարեկամների, աշխատանքային կոլեկտիվի շքր ջանում: Այդ շարքատակ օրը թե՛ Սիրանուշը և թե՛ 3-ամյա թոռնիկ Արայիկը, հարսը՝ Նարինե Կարապետյանը, զոհվեցին տա-տիկին հողարկավորության ցախապատրաստելիս, մեռելա-տանը: ՍԻՐԱՆՈՒԾ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԸ մահկանացուն կըն-քեց դեռ 46 տարին չբոլորած: Հարսը՝ ՆԱՐԻՆԵ ԿԱՐԱ-



ՊԵՏՅԱՆԸ ծնվել է 1966 թ.: Միջնակարգ դպրոցն ավարտե-լով, ուսանել էր հաշվապահա-կան դասընթացներում: Գրա-խանութում էր աշխատում, սիր-ված ու հարգված էր թե՛ ընտա-նիքում և թե՛ գործընկերների շրջանում: Սիրելի մայր էր իր որդու՝ եռամյա ԱՐԱՑԻԿԻ հա-մար, որ կյանքից հեռացավ, չընկալած, թե ի՞նչ է կյանքը և որս քաղցրությունը տակա-վին չճաշակած:



Քանի հեռանում է մեծ ար-հավիրքի օրը, այնքան խորա-նում է անդամայինության զգա-ցումը: Ահավոր աղետը բազմիցս կյանքեր ինչ: Երկրաշարժը ցնցեց բոլորին և մնաց մեր հի-շողության մեջ: Ամենամանրը մարդկային կորուստները են: Մարդիկ, որոնք ծաղիկ հասա-կում հեռացան կյանքից, նրանք շատ անելիքներ ունեին ու ե-րազներ: Բայց... Այդպիսիներից մեկը քույրս էր՝ ԱՐԵՂՆԱԶԱՆ ԵՐՎԱՆԻԻ ԲԱՆՂԿԱՍԱՐՅԱՆԸ, որն իր բալիկի՝ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ հետ հեռացավ կյանքից: Ինչ անե-



լիքներ, ինչ հույզեր ունեն: Գո-րովագուր մայր էր, գորգու-րում ու փայփայում էր իր սի-րասուն զավակին, որն ընդամե-նը երկու գարուն ապրեց և գե-րեզման մտավ մազբիկին փար-ված: Մեղմ ու քնքուշ բնավորու-թյամբ Արեզնազանը իր հմայքն էր տարածում շրջա-պատում: Նրա սիրասուն զա-վակները՝ Տիգրանը և Անին, անցել է երկու տարի, բայց կարծես իրենց տեղը չեն գտ-նում, ամեն պահ նրանք հայաց-քով փնտրում են իրենց սիրա-սուն մազբիկին և թվում է թե՛ ապաստել են նրա վերադարձին: Բայց ավաղ...



ԱՊՊՈՒՆԻ ԹԻՐԵՍԻՆԻ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ ՄԾնվել էր 1962 թ., Լեւոնա-կաճում, ծառայողի ընտանի-քում: Էլուցի շխուկ աննապար-հըն էր նախընտրում Աթոռը, եթե որևէ բան նպատակա-դրվում էր, կատարում էր: 1983 թ. դեկտեմբերի 13-ին ամուսնացավ, կազմեց համե-րաշխ ընտանիք: Ինչպես էր երջանակաճում հարց դառնա-լիս... Երկու երեխաներ ունե-ր, սիրում էր հպարտանալ իր ըն-տանիցով: Օգնում էր կնոջը երեխաներին մեծացնելու դժվա-րին գործում: Հարգված ու սիր-ված էր աշխատանքային ըն-կերների կողմից, որոնք ար-ցունքով են հիշում նրա վեր-ջին օրվա խոսքերը: Աթոռը իր ուրախությունն ու տխու-րությունը միշտ նրանց հետ էր կիսում: Ահեղ տարերքից փրկեց նաև Ծիրակացի փողոցի № 16 շեն-քը: Աթոռի կինը երեխաների հետ 12 ժամ մնաց փրկամբնե-րի տակ, մինչև աստու կամ-քով հայտնվեցին բարի մար-դիկ ու փրկեցին նրանց: Կար-ծես աշխարհի ամենաերջանիկն էին զգում իրենց, սակայն երբ իմացան Աթոռը չկա, զոհվել է աշխատատեղում՝ կոշիկի ֆարքիկացի 8-րդ արտադրանա-սում, աշխարհը փոկ նկավ նը-րանց զվիսին: Թ՛ան 2 տարի է անցել, սակայն ընտանիքն ու հարազատները ոչ մի վայրկ-յան չեն մոռանում նրան...



ՎԱՆԻԿ ԵՎ ՍՈՒՍԱՆԱ ԳԵՎՈՐԳՅԱՆՆԵՐ Մեր աշխարհին հասած դա-ժան արհավիրքը չիմացեց նաև նրանց ջահել կյանքը: Վանիկը՝ 40, իսկ Սուսանը՝ 37 տարե-կան էր: Նրանք հեռացան կյանքից, որը թողնելով երեք փոքրիկների: Օրինակելի, իսկա-կան հայի օջախ էր Գևորգյան-ների ընտանիքը: Ամուսինները երջանկությունը գտել էին տաճ-



անդորրի, իրենց աշխատանքի մեջ: Աշխատում էին Ախուրյանի շրջանի հակակարկուտային ջո-կատում: Սիրված ու հարգված էին իրենց մեղմ, մարդասեր բնավորության համար: Սի-րում էին կյանքը, ծիծաղ էին սփռում շուրջ դին ու այդպես շուտ հրաժեշտ տվեցին կյան-քին: Հանգստությունը ձեռք և հույս, որ ձեր երեք դուստր շի-վերը հզոր կաղնիներ կդառ-նան:

ԱԿԱՆԱՏԵՍԻ ԱԶԲԵՐՈՎ

ԱՂԵՏՅԱԼ ԼԵՆԻՆԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՕՐԸ

1988 թվականի դեկտեմբերի 7-ին հայ ժողովրդի հազարա-պատիկ խոցված պատմությանը ավելացավ ևս մեկ էջ՝ ամենա-կործան երկրաշարժը, որը համեմատության եզր չունի եղա-մերի հետ...

Այդ օրն էլ արթնացան սովորականի նման և մեզանից յու-րաբանչյուրը գնաց իր գործին: Ոչ մեկին մտքով չանցավ, որ երկրակեղևի այդ օրվա անշարժությունը թվացրա է, խաբուսիկ: Ինչ իմանայինք, որ մոլորակի վրա ժամում տեղի ունեցող մոտ տասը ցնցումներից մեկը «բաժին էր ընկնելու» մեզ, և հազվա-դեպ աղետալի երկրաշարժերից մեկը պիտի լիներ հենց Հայաս-տանում: Պատմության մեջ իմ հարազատ քաղաքը դասվեց ամե-նատղետալի երկրաշարժեր տեսածների շարքում:

1988 թ. դեկտեմբերի 7, ժամը 11 անց 40 րոպե. Լեւոնակաճը սրամտների, դեռևս եռուց կյանքով սպրող քաղաք է: 11 անց 41 րոպե. նույն քաղաքը փլատակների կոչու է: Ընդամենը մեկ րոպե անց: Ահավոր րոպե... Փորձեմ տալ այդ մեկ րոպեի ըն-թացքը:

Երկար, ոռնացող բվից... Բվիցը դարձավ ծանր դրոշոց, սպա ամեն ինչ մոլեգնորեն օրորվեց՝ պատերը, առաստաղը, հա-տուակը, կամուրջը, ամեն ինչ անավոր խշշաց, ձայնեց, ճոճոց: Յուրաքանչյուրին թվաց, թե գետինը հեռացավ իր ոտքերի տա-կից: Բոլորը բնագոյարար դռներին հասան: Զանցած վայրկյաններ՝ տեղի ունեցավ երկրորդ, «բախտորոշ» հարվածը: Դարձյալ չա-րագուշակ դրոշոց. հսկայական շենքերի խելագար պար, և... գա-լարվող փոշու ամպեր, ավերակներ, ավերակներ, փլատակներ, փայտակներ: Իսկական սողոմ-գոմոր:

Կյանքը քաղաքում միանգամից կանգ առավ, մի բան է վայր-կյանների ընթացքում մարդկանց օբևանները գերեզմաններ դարձան: Մեռելային լուրջություն: Քիչ անց աղետն ստացավ այլ կերպարանք: Փլատակները դարձան իսկական դժոխք: Երկրի ընդերքից լավող ոռնոցից ստաշացած երկրորդ փոխվեց խոճապի: Աճեցանկանայի է այն ընդարձացու-մը, որ գետին էր մեխել մարդկանց: Փլուզումների ստաշա-քում դրոշոց, վիրավորների հառաչանքներ, մարդկանց ճիգեր, որոնք մեկ րոպե առաջ «այլ» կյանքով էին ապրում, և հանկարծ հայտնվել էին դժոխքում: Փոշուց կորացած, շեշտեղծ մարդիկ, որոնք բնագոյարար էր են փնտրում: Ողջ մնացած մարդիկ, որոնք դժ-վարությամբ անցնելով փլատակների վերածվող շենքերի կողքով և վրայով, շտապում էին իրենց տները: Մարդիկ, որ մնացել էին իրենց տներում և անարժեքված պատեպատ էին զարնվում: Սակայն սա դեռ «նախերգանքն» էր: Ողբերգության խելական դեմքը դեռ պարզորոշ չէր երևում: Շատերը դեռևս չէին հասկա-նում, թե ինչ է կատարվում: Տները քանդվում են, թանձր փոշու քուլաների տեսողությունից ծածկում են ամեն ինչ, հաստ շերտով նստում մարդկանց դեմքերին: Ու փոշու մշուշում խոճապի մատ-ցելված, արյունաթաթախ, սպա ու այն կողմ նմուրդ մարդիկ: Ցե-րեկը հանկարծ դարձել էր գիշեր, և կենդանի մնացածները այդ խավարի մեջ նման էին խելախորոյս ուրվականների, որոնք փըր-կություն էին որոնում: Մերթ աչտուղ, մերթ աչտուղ ցշմարվում էին հոգեվարքի մեջ ջրածզվող մարմիններ: Մարդիկ անցնում էին մեկից մյուսը, հուսադրանքի խոսքեր ասում, միաժամանակ որոնում հարազատներին:

Շատերը խելագարված դեռ փնտրում էին իրենց երեխանե-րին, քույր ու եղբորը, ազգ ու բարեկամին: Բայց դեռ էլի գալ-քույր ուներ պահած բնությունը: Այս ու այնտեղ հրդեհ թնկվեց: Ջուր չկա: Ստորերկրյա ցնցումները շարքից հանել են ցմուղը, գազամուղը, հեռախոսային և էլեկտրական կարեկները: Դժվար է նկարագրելը, թե ինչ էր տեղի ունենում, երբ հրդեհի ալ կարմիր հրացույքը հեռագետն ցրում էր խավարը և... մարդիկ օգնություն էին աղերսում: Բայց նրանց ճիշերը իլյանում էին ընդհանուր աղ-մուկի մեջ: Տիրել էր անելանելի հուսադրություն, որը ոչ որ չէր փորձում կարեկցությամբ կամ օգնությամբ մղվել:

Այդ ժամանակ քաղաքից դուրս դեռևս չգիտեին պատահա-րի մասին...

Ոմանք մտածեցին, թե գուցե հաջողվի փրկել իրենց տան փլատակների տակ թաղված իրերի մի մասը: Ոմանց հաջողվեց...

Ջառերն էլ դուրս չեկան փլատակներից: Այնտեղ օրվա կրեկո: Հաղաքում ամենուրեք վառվող խա-րույկներ, շուրջը՝ տարաբախտ մարդիկ: Էլեկտրականություն չկա, խավարը ցրում են մտերը, որոնց պաշարը պետք է խնայել: Ա-ղետյալները գիշերը ծվարեցին, որ պատահեց: Մարդիկ նայում էին հողին ու սարսափում. գետինը տարրերովում էր նրանց ոտ-քերի տակ: Կան վիրավորներ, փոքրերը, հոյ կամայք խնամքի, ուշադրությամբ կարիք են զգում: Կիսախավարում ու աներևակա-լելի բառսի մեջ բժիշկները օգնում են վիրավորներին, կազմում «հրկվածներին» փոխադրումը: Դիակների թիվն այլևս անհնար է հաշվել: 250 հազար բնակիչ ունեցող քաղաքում ամենուր մի-կուղմ պատկերն էր, որ կարծես ասում էր, թե նկն է աշխարհի վերջը: Սուսանայն ալեղի էր սաստկանում ամեն կողմ տարածվող լուրերից, որ մինչև օրս էլ շարունակվում է, թե անխուսափելի է նոր, ավելի ուժեղ ցնցում: Բոլորը դարազրգին են ու ջղախն. նը-րանք նայել են մահվան աչքերին: Բնության զարթուրելի հար-վածը մարդանց ձգել է միևնույն փոսի մեջ՝ ար ձուլվում և միա-նում են տարբեր հոգեբանություններ, շնավորություններ: Յուրա-քանչյուրն զգում է իր թուլությունը բնական աղետի դեմ: Գիշեր-վա անդեղի լուռությամբ մեջ բնության արհավիրքն է խոսում:

Ահա այդպիսին էր աղետյալ Լեւոնակաճի ստաշին օրը...

ԼԵՆԱ ԵՎ ՍՈՆԱ

ՀԱԿՈՐԱՆՆԵՐ



Լենա Համբարձումի Հակոբյանը ծնվել էր 1949 թը վականին, Լենինականում: Ընդունվեց, սովորեց և գերագակցությամբ ավարտեց Ավ. Իսահակյանի անվան (№ 26) միջն. դպրոցը: Մեկ տարի անց ընդունվեց Մ. Նալբանդյանի անվան մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետ: Ռուսմե ավարտելուց հետո ժամանակավոր աշխատանքի անցավ որսվես քարտեղչարդի, ապա՝ մեքենագրուհի: Այնուհետև նա ծննդավայրի Ա.

Պետրոսյանի անվան (№ 10) դպրոցում աշխատեց տարրական դասարանների ուսուցչուհի: ԼԵՆԱ և ՍՈՆԱ համալսարանի էր իր սաներին և մինչև վերջ չբաժանվեց նրանցից: Աղետի օրը ուսուցչուհին իր երրորդ դասարանի աշակերտների հետ գոհ դարձավ անկողնի վրա լքված: ՍՈՆԱՆ Լենայի դուստրը, ծնվել էր 1975 թվականին, նույնպես ուսանել էր Ա. Պետրոսյանի անվան դպրոցում: Դաժան 88-ին նա 7-րդ դասա

րանում էր: Դպրոցական տարիներին աչքի էր ընկնում հասարակական աշխատանքների պարտաճանաչ կատարմամբ, կազմակերպչական ընդունակությամբ: Սովորում էր գերագույն առաջադիմությամբ: Սոնայի կյանքում սուաջին դժբախտ հարվածն եղավ հոր հետանալը ընտանիքից: Բայց մեծ կամքի ու շնորհիվ նրանց մայրը պահեց ու փախկանց իր դուստրերին: Խաղաղ կյանքի ընթացքը խաթարվեց դեկտեմբերի 7-ին:



Ունեի երեք դուստր. ավագը՝ Արմինեն, ծնվել է 1980 թ., 1981 թ. ծնվեց Հերմինեն, իսկ 1984-ին՝ Նարինեն: Երեք դուստրը, լավ ամուսին, տուն, աշխատանք... Գոհ էր Նախշունը իր կյանքից, բախտից, ամեն ինչ կարծես թե ընթանում էր նորմալ: Հարգված ու սիրված կին, մայր, լավ ընկերուհի և լավ հարևանուհի: Ժամերես ու բարի Նախշունին դառն անկատարի էր բաժին ընկած: Այդ շարաբաստիկ օրը նա սովորականի նման երեխաներին տարավ դպրոց ու մանկապարտեզ, բայց ինչ իմանար, որ վերջին անգամ է ուղեկցելու իր սիրալուսն բալկոնից, նրանց վերջին անգամ է տեսնում: Ու բաժանվեց երեխաներից, ամուսնուց, բարեկամներից հավիտյան: Նախշունին էլ գոհ դարձավ անիծյալ երկրաշարժին:

ՎԱՆՈՒՆ ԱՐՄԻՆԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Ծնվել է 1980 թ. Լենինականում: Ավարտել է Բաֆթու անվ. № 32 միջն. դպրոցը: 1979 թ. ընդունվել է № 15 պրոֆտեխտունմարանը: Այն ավարտելուց հետո աշխատանքի է անցել հանրախանութում որպես վաճառուհուհի:



ԱՐԻՄ ՍԵՐՅՈՒԺԱՆԻ ԳԱՍՊԱՐՅԱՆ

—Մի րի շաղիկ, ախր ինչպե՞ս եղավ, ինչի՞ համար...— ամեն անգամ աղբյուրի դիմանկարին նայելով չի կարողանում արցունքեք բը զսպել մայրը՝ Արուսյակը:

Վերքի վրա աղ է լցնում հինգ տարեկան աղբիկ թոսեկը, ջրի երկու կաթիլ պես մոր նման՝ սլացիկ, գեղեցիկ, հերարձակ մազերով, «Տատիկ, պատմիր մորս մասին»,— ասում է հաճախ փոքրիկը, ինքն էլ չիմանալով, թե ինչ տառապանք է պատճառում տատիկին, այդ խոսքերն ասելով:

Արիան ծնվել է 1963 թը վականին, Լենինականում: Դպրոցում ուղիմ էր, կարգապահ, ուսումնասիր. Բարձր գնահատականներով ավարտեց այն, ընդունվեց ԵրՊԻ-ի Լենինականի մասնաճյուղի մեխանիկական ֆակուլտետը: Այստեղ էլ իրեն դրսևորեց արժանի կերպով և բնավ էլ դարձանալի չէր, որ բուժը ավարտելուց հետո մնաց ինստիտուտում դասավանդելու:

«Կյանքի միակ իմաստը մեր երեխաներն են»,— հաճախ էր կրկնում Արիան: Զոհվեց աշխատանքի վայրում, բալկոնների անունները շուրթերին, անկատար բյուրավոր իղձերով: Զոհվեց մրժուռապատ կարոս թողնելով իրեն ճանաչողների սրտերում:



ԵՆՆԱ ԵՎ ԱԼԵՆՏ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆՆԵՐ

Իրար հետ սովորեցին բժշկական ուսումնարանում, ավարտեցին, բույն հյուսեցին: Ելնան միշտ թախճոտ էր, որք էր մեծացել, բայց Ալբերտին հանդիպելով աչքերի տիրությունը ցրվեց: Ամենուր միասին էին, սիրով, համերաշխ: Կյանքի դժվարությունները նրանց ընտանիքի անդորրը չէին խանգարում: Տասը տարի ապրեցին այստեղ-այնտեղ վարձով, մինչև բնակարան ստացան: Հետո արդար աշխատանքով ու քըր



տիրանով կանաչորեցին այն, ամեն ինչ կար երջանիկ լինելու համար ու... լիաթոք ծըպ սուաջին: Բայց ավաղ... քարացավ այդ ժպիտը նրանց դեմքերին, նաև երկու զավակների՝ Արտյոմի և Արտակի սըրտերում: Միշտ է, հարազատեքը հասան, իրենց թևերի տակ առան որբերին, բայց առանց ծնողի երեխան ի՞նչ է: Գիտակցում են այդ երկու փոքրիկները ու մի տեսակ լուսկյաչ են դարձել, խուսափում են մարդ կանցից: Տա աստված, որ նըրանք լավ մարդ դառնան ու վատ պահեն հայրենի օջախի ծուխը:



ԱՆՈՒՆ ՀՐԱՉԻ ՆԱԶԱՏՐՅԱՆ

Բարի, առույգ, կենսուրախ, գեղեցիկ ու ժպտալիկ էր նա: Դասընկերների սիրելին էր № 12 դպրոցում, ապա պոլիտեխնիկական ինստիտուտում: Առանց նրա չկար ոչ մի հավաք, ոչ մի միջոցառում և ոչ մի նախաձեռնություն: Այնպես

արագ էր կողմնորոշվում, այն պես ճիշտ վճռում, այնպես հաճախ ու վստահ ասում էր իր խոսքը, որ առարկության տեղ չէր մնում:

Անդամական էր իր անվանը՝ անուշ էր հիշվելի: Վտղ ամուսնացավ և 22 տարեկան հասակում արդեն բան իմացությամբ ու հանույրով էր դաստիարակում քերուշ աղջնակներին՝ Հասմիկին և Գայանեին: Ինչ էլ երազում էր երիտասարդ մայրը, առանցքում աղջիկներին լավ մարդ ու շը նորհալի մայր տեսնելու իղձն էր: Իղձ, որը, դժբախտաբար հուշ դարձավ ու կորստյան դառը կսկիծ, արցունք դարձավ ու շիրիմը զարդարող թաղում ծաղիկների մշտաբուռն երգ՝ ապրած գեղեցիկ, բայց կարճ կյանքի, բարի բնավորության ու մարդկային վեսն հատկությունների մասին:



ԹԵՆԵՋԱ ԱՐՏԱՆՈՒ ՊԵՏՐՈՍՅԱՆ


Ծնվել է Լենինականում 1974 թ. նոյեմբերի 1-ին, սովորել Ղ. Ղուկասյանի անվան դպրոցում, 8-րդ դասարանի ասն էր, երբ տեղի ունեցավ անավոր աղետը: Թենեջան երազում էր ութնամյակը ավարտելուց հետո ընդունվել Երևանի քիմիական տեխնիկում և դառնալ դեղագործ: Պարզ էր հոգով, լավաստ էր, սիրում էր մարդկանց, շատ էր սիրում եղբոր փոքրիկ տղային՝ Արկադիին, որը ասես անբաժան



Ընկերն էր նրա... միասին էլ հանձնվեցին հողին:

ԱՐԿԱԳԻԿ ՆՈՐԻԿԻ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Ծնվել է Լենինականում 1986 թ. դեկտեմբերի 8-ին: Աղետի օրը գտնվել է Կալինինի փողոցի 9 հարկանի շենքերից մեկում: Աշխույժ երեխա էր, թախճոտ աչքեր ուներ: Լրանալու էր Արկադիի երկու տարին և անկամքությամբ սարսում էին այդ օրվան: Նա էլ արհավիրքի գոհ գնաց՝ ոչինչ դնելու չճաշակած:



ԼԵՆԻՆԱԿԱՆՅԱՆ տներ, որ գերիզմաններ դարձան... Լուսանկարը՝ Հ. Ներսիսյանի